

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին Սյունիքի մարզպետարան

մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2018 թվականին մարզպետարան է մուտքագրվել՝ 12420 թղթակցություն, առաքվել՝ 8165 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է 33 կառավարությունից և վարչապետից՝ 712, 33 տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից՝ 975, Հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 1270, մարդու իրավունքների պաշտպանից՝ 8, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 2713, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 3465, գաղտնի թղթակցություն՝ 111, քաղաքացիներից՝ 3166 դիմում: 33 Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 441 դիմում, որից՝ 33 կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 362, 33 Ազգային ժողովից՝ 5, 33 տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից՝ 29, հանրապետական գործադիր մարմիններից՝ 36, 33 մարդու իրավունքների պաշտպանից՝ 9 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2018թ. կատարվել է 681 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ

ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և
զարգացման նախարարություն: